

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ N 1

Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխությունների և լրացումների որոշման նախագծով լրացվող 2.9.5 ենթակետի

1. Առաջարկվող դրույթը

Առաջարկվում է Կանոնագրքում լրացնել նոր ենթակետ, հետևյալ բովանդակությամբ՝

2.9.5 Փաստաբանը չի կարող Պալատի խորհրդի անդամների, նախագահի, որակավորման հանձնաժողովի անդամների կամ կարգապահական գործ նախապատրաստող անձանց նկատմամբ վիրավորական կամ զրպարտչական գործողություն իրականացնել (այդ թվում՝ վիրավորական քննադատություն), կապված վերջիններիս լիազորությունների իրականացման հետ: Սույն ենթակետում նշված արգելող կանոնը չի բացառում նրանց նկատմամբ փաստաբանի քննադատական վերաբերմունք արտահայտելը ու օրենքով սահմանված դեպքերում և կարգով նրանց գործողությունների բողոքարկումը:

Պարզաբանումը՝

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ Փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ (*Stéu Casado Coca v. Spain* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ Փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահողի, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակագրել ինքն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկի տվյալ մասնագիտությունը (CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession):

CCBE-ի վարքագծի կոդեքսի հանձնաժողովի նախագահը 15.03.2018թ. Երևանում տեղի ունեցած համաժողովի ժամանակ փաստաբանի հեղինակության մասին իր խոսքում նշել է՝ « Արդյո՞ք կարգապահական խախտում է փաստաբանի կողմից Փաստաբանական պալատին վիրավորելը: Ես այսպես ասեմ, փաստաբանական էթիկայի խախտում է ընդհանրապես ցանկացած անձին վիրավորելը, այդ թվում և հատկապես Փաստաբանական միության ղեկավարներին: Հարց հնչեց ֆեյսբուքում փաստաբանի

վարքագծի մասին: Անշուշտ ես չեմ կարող խոսել կոնկրետ գործերի մասին, քանի որ մանրամասներին ծանոթ չեմ, բայց ես կարող եմ ասել ավելի ընդհանուր կերպով՝ փաստաբանները պետք է լինեն լոյալ և պետք է համագործակցեն միմյանց հետ: Երբ երկու փաստաբանի միջև առաջանում է անլուծելի կոնֆլիկտ, այն պետք է տեղափոխվի կարգապահական մարմնի տիրույթ: Դեռևս կարծում եմ հին հռոմեական կանոնն էր ասում, որ որևէ մեկը չի կարող դատավոր լինել իր սեփական գործով: Օրինակ՝ Լեհաստանում լինում են դեպքեր, երբ Փաստաբանական միության նախագահն է կատարում կարգապահական զանցանքներ: Նման դեպքերի համար, ինչպես նաև այն դեպքերի համար, երբ Փաստաբանական միության խորհրդի անդամների կողմից են կատարվում կարգապահական կանոնադրի խախտումներ, Լեհաստանի փաստաբանների միությունն ունի համապատասխան իրավական կարգավորումներ: Սա պրոցեսուալ խնդիր է, որը պետք է լուծվի հիմքում ունենալով այն սկզբունքը, որ ոչ մեկը չի կարող լինել իր սեփական գործով դատավոր: Եթե դուք չունեք նման կանոններ, ես խորհուրդ կտամ մշակել դրանք: Վերջին հարցը, որին ուզում եմ անդրադառնալ, փաստաբանի մասնագիտության հեղինակությունն է: Սա իրոք կարևոր խնդիր է, քանի որ հեշտ է փչացնել մասնագիտության հեղինակությունը, սակայն դժվար է այն ստեղծել: Ես համոզված եմ, որ փաստաբանության հեղինակությունը շատ կարևոր է ցանկացած երկրում: Փաստաբանը պետք է զերծ մնա այնպիսի արարքներից, որոնք կարող են վնասակար լինել փաստաբանի մասնագիտության հեղինակության, Փաստաբանների միության ղեկավար մարմինների և կարգապահական մարմինների համար: Օրինակ՝ փաստաբանն իրավունք չունի չենթարկվել կարգապահական մարմնի պարտադիր որոշումներին: Լեհաստանում ոչ բոլոր փաստաբաններն են ընդունում Փաստաբանական միության գործող նախագահին, բայց դա չի նշանակում, որ դա կարող է հանգեցնել հրապարակային կոնֆլիկտի: Քննադատությունն ինքնին լավ բան է, սակայն փաստաբանը պետք է գիտակցի ինչպես, ինչ մեթոդով, երբ, որտեղ իրացնի իր քննադատությունը: Հաստատաբար դա չպետք է արվի հեռուստատեսությամբ:» (Տես տեսանյութը՝ <http://advocates.am/news/view/1988.html>):

Ինչպես տեսնում ենք այս համատեքստում Կանոնադրի գործող 2.2.3, 5.1 և 5.2 կետերն այս պահին էլ արգելում են փաստաբանին վիրավորել այլ փաստաբաններին, այդ թվում՝ Պալատի մարմիններում և աշխատակազմում ընդգրկված փաստաբաններին:

Առաջարկվող լրացմամբ հստակեցվում է նշված հարցը և երաշխավորվում է փաստաբանի քննադատելու իրավունքը: